

ՊՐՈՖԵՍՈՐ ՀԱՅԿ ԳՅՈՒԼԻՔԵԼԵՅԱՆ

(ՄԵՆԴՅԱՆ 90-ամյակի առթիվ)

Վ. Վ. ՂԱԶԱՆՉՅԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը դրանիտե պատվանդան ստեղծեց գիտությունների բոլոր ճյուղերի զարգացման համար: Երևանի տեխնիկական համալսարանը դարձավ գիտության առաջին օջախը: Սկզբնական տարիներին մեծ զարկ ստացան նախ հումանիտար գիտությունները, առանձնապես հայագիտության հիմնական ճյուղերը, իսկ նրանց զուգընթաց՝ փիլիսոփայական գիտությունները: Սովետական Հայաստանում փիլիսոփայական գիտությունների ռահվիրան եղավ պրոֆեսոր Հայկ Գյուլիքեխյանը:

Հայկ Գաբրիելի Գյուլիքեխյանը ծնվել է 1886 թ. հունվարի 6-ին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում, ժողովրդական ուսուցչի ընտանիքում: Նա միջնակարգ կրթությունը ստանում է հայրենի քաղաքի ռեալական ուսումնարանում, որտեղ և անում է իր հասարակական-քաղաքական գործունեության առաջին քայլերը:

1905—1906 թթ. Հայկ Գյուլիքեխյանը իր ընկերների՝ Աշոտ Հովհաննիսյանի և Իսահակ Գովլաթյանի հետ Շուշիում կազմակերպում է սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական խմբակներ: Շուշվա այդ խումբը ակտիվորեն մասնակցում էր կուսակցական մամուլի աշխատանքներին, տարածում հեղափոխական պրականություն: Նրանց գաղափարական գործունեությունը ղեկավարապես ուղղված էր նացիոնալիզմի դեմ, որը այդ տարիներին ցարիզմի կողմից հրահրվող հայ-թաթարական ընդհարումների հետևանքով աբմատներ էր գցում աշխատավորական լայն խավերի մեջ:

1906 թ. Գյուլիքեխյանը մեկնում է Գերմանիա՝ բարձրագույն ուսումը շարունակելու նպատակով: Գերմանիայում սովորելու տարիներին (Ենայում, Լայպցիգում, ալնուհետե Ցյուրիխում և Հայդելբերգում) նա ուսումնասիրում է փիլիսոփայություն, եվրոպական գրականություն և տնտեսագիտություն: Գյուլիքեխյանը ունկնդրել է այն ժամանակվա աշխարհահռչակ փիլիսոփաներից և տնտեսագետներից՝ Վիլհելմ Վունդտին, Վինդելբանդին, Հեկկելին, Բյուխներին և ուրիշներին: Նա հիմնապորապես տիրապետում է գերմաներենին, սովորում ֆրանսերեն և անգլերեն, հափշտակված կարգում է եվրոպական գրականության դասականների երկերը: 1914 թ. Գյուլիքեխյանը ավարտում է Հայդելբերգի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը: Նրա դոկտորական դիսերտացիայի պաշտպանությունը և հայրենիք վերադառնալուն խանգարում է 1914 թ. վերահաս համաշխարհային պատերազմը: Նույն տարում, որպես ռուսահայտակ և քաղաքականապես անբարեհույս տարր գերմանական իշխանությունները նրան ձերբակալում և նետում են համակենտրոնացման ճամբար, որտեղ մնում է մինչև 1918 թ.:

Գերմանիայում ուսանելու տարիներին Գյուլիքեխյանը ակտիվորեն մասնակցել է գերմանական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցու-

թյան ձախ թևի քաղաքական աշխատանքներին: Ռուսաստանի հեղափոխական շարժման և կուսակցական կյանքին նվիրված հոգվածներով ու թղթակցություններով նա հանդես է եկել «Հայպցիզեր ֆուքսցայտունդ», «Հայդելբերգեր ֆուքսբլատեր» թերթերում, որոնց խմբագիրներն էին Ռոզա Լյուքսեմբուրգը, Կարլ Լիբկնեխտը և մյուսները: Վերջիններիս հետ նա մոտիկ հարաբերությունների մեջ է եղել: Նույն այդ շրջանում նա կարգում է Պլեխանովի և Լենինի երկերը, «Իսկրայի» համարները, նամակներ է գրում Պլեխանովին, որոնցից մի քանիսը պահվում են Պլեխանովի Լենինգրադի տուն-թանգարանում:

1914—1918 թթ. նա քաղաքական ակտիվ գործունեություն է ծավալում ճամբարներում եղած ռազմագերիների շրջանում:

1918 թ. Բեռլինի սովետական ներկայացուցիչ Բոֆֆեի միջամտությամբ, ռազմագերիների փոխանակության կարգով, Գյուլիքեխյանը ազատվում է գերությունից և փոխադրվում Մոսկվա: Որոշ ժամանակ անց նրան ուղարկում են Աստրախան, ուր և սկսվում է նրա կուսակցական-քաղաքական գործունեությունը սովետական շրջանը:

Աստրախանում Գյուլիքեխյանը աշխատում է 11-րդ բանակի քաղաքականում իբրև պրոպագանդիստ, դասախոս և քաղաքացի պետ: Խմբագրում է բանակի «Красный воин» թերթը, միաժամանակ աշխատում է Հայկական գործերի կոմիսարիատի Աստրախանի բաժանմունքում և Աշոտ Խումարյանի հետ խմբագրում հայերեն լեզվով լույս տեսնող «Կարմիր քանդոր» թերթը:


1920 թ. հուլիսին, ՌՍԴԲԿ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշմամբ, Հայկ Գյուլիքեխյանը ուղարկվում է Դրուզնի՝ կուսակցական աշխատանքի, իսկ 1920 թ. դեկտեմբերին կուսակցության Կենտրոնական կոմիտեն Հ. Գյուլիքեխյանին մոբիլիզացիոն կարգով ուղարկում է Սովետական Հայաստան: Նա նշանակվում է ռուսերեն լեզվով լույս տեսնող «Коммунист» թերթի խմբագիր: 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի ժամանակ Ղամարյուի ռազմականում, որպես երկրորդ գնդի քաղղեկ, գեներ ձեռքին կռվում է դաշնակների դեմ: Ավանտյուրայի ճնշումից հետո նա շարունակում է խմբագրել նույն «Коммунист» թերթը: 1921 թ. մայիսին նշանակվում է Ալեքսանդրապոլի կուսակցական գավառային կոմիտեի կուլտպրոպագանդի վարիչ, միաժամանակ խմբագրելով «Կարմիր Շիրակ» թերթը:

1923 թ. Հ. Գյուլիքեխյանը նորից փոխադրվում է Երևան և նշանակվում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչ և ապա Կենտկոմի քարտուղար: Այդ տարիներից էլ սկսվում է նրա գործունեության նոր շրջանը, երբ նա հրապարակ է գալիս իբրև գիտական աշխատող, փիլիսոփա, գրականագետ, հրապարակախոս:

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն, նկատի ունենալով Հ. Գյուլիքեխյանի գիտական պատրաստվածությունը, նրան նշանակում է պետական համալսարանի գիտական գծով առաջին պրոֆեսոր: Երևանի նորաստեղծ համալսարանը վերածնվող հայ ժողովրդի այն առաջին կաճառն էր, որտեղ նորից սկսեց վառվել բազմադարյան հայկական մտքի լուսավոր ջահը: Աշխարհի բոլոր ծայրերից Երևան էին հավաքվում գիտություն տարբեր ճյուղերի ականավոր հայ մասնագետները, որոնցից շատերը եվրոպական կրթություն ստացած և գիտություն ասպարեզում հռչակ հանած անվանի գիտնականներ էին: Մտավորականության այդ հզոր կոհորտայի շրջապատում իր պատկանելի տեղն ունեւ Հայկ Գաբրիելի Գյուլիքեխյանը՝ իբրև

կուսակցական գաղափարները բարձր մակարդակով կենսագործող հեղինակություն, երբ նոր էր կազմավորվում նրանցից շատերի մարքսիստական աշխարհայացքը:

Սովետահայ գիտնականների առաջին սերնդի ներկայացուցիչների գաղափարական դաստիարակության գործում «Գյուլին» (այդպես էին կոչում նրան) փորձառու խորհրդատուի և ուսուցչի դեր էր կատարում: Պատահական չէր այն բարձր պատկառանքը, որ բոլորը տածում էին դեպի նա: Գյուլին մենք միշտ տեսնում էինք շրջապատված անվանի գրողներով, բժիշկներով, ճարտարապետներով, դերասաններով, ռեժիսորներով: Նրա մտերիմ բարեկամներն ու տան մշտական հյուրերն էին բժիշկ Միրզա-Ավագյանը, բժիշկ և դրամատուրգ Ստեփան Բազդասարյանը, հայտնի դերասան և դրամատուրգ Մկրտիչ Ջանանը, եվրոպական գրականության գիտական Սարգիս Մանուկյանը, Սիմոն Հակոբյանը, տեխնիկական գիտությունների դասախոս, պրոֆեսոր Աշոտ Տեր-Մկրտչյանը և շատ ուրիշներ: Նրա մտերիմներից էր մեր մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը:



Անվանի դերասան, ռեժիսոր և դրամատուրգ Վաղարշ Վաղարշյանը իր հուշերի առաջին գրքում («Ընկերներս, բարեկամներս և ես») ջերմ տողեր է նվիրել Շուշվա իր երկու մեծ հայրենակիցներին՝ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանին և Հայկ Գյուլիքեխյանին: Վերջինիս մասին մասնավորապես գրել է. «Մտերիմներն ու ընկերները Հայկ Գյուլիքեխյանին անվանում էին «Գյուլի»: Ով կարող էր ենթադրել, որ այդ լուսկյաց, արտաքուստ մուսլի, էությանմբ ամոթխած երիտասարդը հետագայում պետք է դառնա մարքսիստական գրականագիտության ականավոր գեմբը»:

Գյուլիքեխյանը խոշոր դեր խաղաց սովետահայ փիլիսոփայական մտքի պարզացման գործում: Նա էր, որ առաջինը գլխավորեց Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության ամբիոնը, որը այսօր արդարացի կերպով կոչվում է նրա անունով:

Մեծ է Գյուլիքեխյանի երախտիքը գաղափարական բնագավառում: Նա իր հրապարակային բազմաթիվ ելույթներում արժարժել է մեր հասարակությանը այդ տարիներին հուզող և՛ փիլիսոփայական, և՛ գրականագիտական, և՛ գեղագիտական բնույթի բազմաթիվ հարցեր, տալով դրանց գիտական ճիշտ մեկնաբանություն:

Նշանակալի է Գյուլիքեխյանի երախտիքը նաև գիտական հիմնարկների կազմակերպման գործում: Նրա ջանքերով 1931 թ. Երևանում հիմնադրվեց մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը, որի առաջին դիրեկտորն էր նա: 1934 թ.

նա զլխավորեց լուսժողովմատին կից նոր կազմակերպված գրականության և պատմության ինստիտուտը: Կյանքի վերջին տարիներին Գյուլիքեխյանը գրականության դասախոս էր Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտում և միաժամանակ շարունակում էր գիտահետազոտական աշխատանք կատարել գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտում:

* * *

Հ. Գյուլիքեխյանի գրական ժառանգության մեջ զգալի տեղ են գրավում նրա գրականագիտական աշխատությունները, որոնք ամփոփված են հեղինակի «Քննադատական հոդվածներ» ժողովածուում (լույս է տեսել 1952 թ.):

Հայրենական պատերազմի տարիներին Հ. Գյուլիքեխյանը հատկապես զբաղվեց սովետական դրամատուրգիայի հարցերով: Այդ կարգի ուսումնասիրությունների շարքին են պատկանում նրա «Սովետական հայ դրամատուրգիան 25 տարում», «Հայրենական պատերազմի շրջանի սովետական ռուս դրամատուրգիայի շորս պիեսների մասին», «Սովետահայ դրամատուրգիան Հայրենական պատերազմի առաջին շրջանում» և այլ ուսումնասիրություններ, որոնք լույս տեսան 1948 թ. «Սովետական հայ դրամատուրգիայի մասին» խորագիրը կրող գրքով:

Սովետական գրականության հարցերով նա զբաղվում էր և՛ տեսականորեն, և՛ գործնականորեն: Հայտնի է, որ Գյուլիքեխյանը Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի հիմնադիրներից մեկն է, տարիներ շարունակ գուրդուրել և աճեցրել է գրողների և գրականագետների մի ամբողջ սերունդ: Հ. Գյուլիքեխյանը կենդանի հետաքրքրությամբ դրել և խոսել է սովետահայ գրականության ամեն մի նշանակալից երևույթի մասին, իրեն հատուկ մաքուր սրտով և օբյեկտիվությամբ հետևել է մեր գրականության ստեղծագործական պրոցեսին, զրվատել է լավը, ուրախացել նվաճումներով, քննադատել և մերժել է խոտանն ու անընդունելին: Այդ տեսակետից սովետահայ գրական քննադատության ավագ սերունդը իր ժամանակին շատ բան է սովորել նրանից: 1920—1930 թթ. նա բազմաթիվ հրապարակային զեկուցումներ է կարդացել և հոդվածներ գրել, որոնք, կարելի է ասել, սովետահայ գրական քննադատության և գրականագիտության հիմնաքարերն են հանդիսանում:

Նշված հոդվածներում Հ. Գյուլիքեխյանը շոշափում է այդ շրջանում սովետական գրականությանը, գրողներին ու գրականագետներին հուղող բազմաթիվ հարցեր. օրինակ՝ ձևի և բովանդակության փոխհարաբերությունը արվեստի մեջ, աշխարհայացքի ու աշխարհզգացման տարրերի միասնության, ահի ու լեզվի հարցերը և այլն: Սոցիալիստական էսթետիկայի հիմնական սկզբունքների լուսաբանման տեսակետից Հ. Գյուլիքեխյանի կարևոր հոդվածներից մեկն էլ «Ֆորմալիզմի և նատուրալիզմի արտահայտությունները մեր կերպարվեստի մեջ» հոդվածն է, որը լույս է տեսել 1936 թ. «Խորհրդային արվեստ» ամսագրում: Այդտեղ հստակ կերպով շարադրված են հեղինակի ըմբռնումները սոցիալիստական ռեալիզմի, ժողովրդայնության և կուսակցականության մասին:

Հ. Գյուլիքեխյանի գրականագիտական շատ ուսումնասիրություններ այսօր էլ պահպանել են իրենց գիտական և հրապարակախոսական շունչն ու քարտեզները:

Հայ մեծ լուսավորիչ հաշատուր Աբովյանին նվիրված ոչ մեծածավալ աշխատությունը նա գրել է 1943 թ. այն պահին, երբ մեր երկիրը կենաց ու մահու կռիվ էր մղում գերմանական ֆաշիզմի զագագած հորդաների դեմ: Այդ գործը իր ժամանակին գաղափարական ազդակ է եղել աբովյանական հայրենասիրությունը և ժողովրդասիրությունը երիտասարդության մեջ բորբոքելու և վառ պահելու համար: Աշխատությունը գրված է Հ. Գյուլիքեխյանին հատուկ րնտիր հայերենով. պատկերավոր ու ճոխ լեզվով, տեսական սլատշաճ խորությամբ և գաղափարական առողջ հենքով: Աբովյանի հայրենասիրության մեջ հեղինակը տեսնում է երկու փուլ. առաջինում նրա հայրենասիրության ափրապետող շեշտը դեռևս զգացմունքային էր, ժողովրդի նկատմամբ ունեցած վերաբերմունքը՝ հուզական, իսկ դորպատյան սարիներին նրա հայրենասիրությունը դարձավ ավելի գիտակցական, զգացմունքները ավելի խորացան և համակվեցին մարդկայնությամբ: Հ. Գյուլիքեխյանը գրում է, որ Աբովյանը, իբրև հայ ժողովրդի մեծ լուսավորիչ, ամենից ցայտուն արտահայտեց ժամանակի ոգին, ամենից խոր ակոսեց հին էյանքը և ամենից հեռու նետեց իր հայացքը: Հայ ժողովրդին դարափոսերից, կեռմաններից տվող արահետներին դեպի պատմության լայն ուղին առաջնորդելը կլանեց նրա ուշքն ու միտքը: Գյուլիքեխյանը նկատում էր, թե Աբովյանը կողմնակից էր ազգերի անհատական դեմքի պահպանմանը, նա մարդկությունը համարում էր մի ծաղկեփունջ, որի մեջ ամեն ծաղիկ իր տեղն ունի, և ոչ ոք չի կարող ասել, թե սա լավ է, մյուսը վատ, քանի որ նրանց տարբերությունն է կազմում այդ փնջի ներգաշնակ սամրոջականությունը:

Հ. Գյուլիքեխյանը գրել է նաև Գաբրիել Սունդուկյանի մասին: Այդ գրությունը լույս է տեսել 1944 թ., ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ, «Հայրենական կուլտուրայի ականավոր գործիչները» շարքով: Հեղինակը գտնում է, որ Սունդուկյանը XIX դարի հայ մեծանուն դրամատուրգն է: Նա էր, որ մեր ռեալիստական դրամատուրգիան դուրս բերեց մանկական հասակից և արժանացրեց հասունության վկայականի, գաղափարական մեծ լիցք, սոցիալական հարուստ բովանդակություն ներարկեց այդ դրամատուրգիային, անսահմանորեն բարձրացրեց նրա գեղարվեստական արժեքը և արժանավոր տեղ գրավեց նրա համար մեր գրականության մեջ: Ամփոփելով իր միտքը մեծ դրամատուրգի մասին, Գյուլիքեխյանը գրել է, որ Սունդուկյանը 1860—1870-ական թթ. մեր գրականության ամենամեծ ռեալիստներից մեկն է: Իր պատկերած իրականության խոր, բազմակողմանի ճանաչմամբ, արտուցված կյանքի էականը բացահայտելու կարողությամբ նա եզակի է մեր դրամատուրգիայի ասպարեզում: Սունդուկյանին նվիրված այդ աշխատության մեջ Գյուլիքեխյանը խոր վերլուծության է ենթարկել մեծ դրամատուրգի երկերը, տվել է Սունդուկյանի ստեղծագործությունների և՛ սոցիալական, և՛ էսթետիկական հետազոտության փայլուն օրինակ այն ժամանակ, երբ դրամատուրգիայով զբաղվողները դեռևս շատ քիչ էին մեզսանում:

Պատկանյանի մասին գրած գործերում Գյուլիքեխյանը փորձել է քննության առնել գրողի գեղարվեստական արձակի առանձնահատկությունները (կոմպոզիցիա, սյուժե) և դրանց հետ կապված մի քանի այլ խնդիրներ: Խոսելով Պատկանյանի ստեղծագործական մեթոդի մասին, նա գտնում է, որ Պատկանյանը այն հայ գրողներից մեկն է, որը չի թաքցնում իր համակրանքն ու հակակրանքը: Նա աշխատում է իր հասարակական իդեալներին դեմ դնա-

ցողին ոչնչացնել ծաղրով ու հեգնանքով: Խոմանտիկական իդեալականացման տարրեր ու շափազանցություններ են պարունակում Պատկանյանի այն վիպակները, որոնք արվեստի տեսակետից որոշակի արժեք են ներկայացնում: Հ. Գյուլիքեխյանը գտնում էր, որ Պատկանյանի աշխարհայացքի կիզակետը հայ ժողովրդի ինքնապահպանության հարցն է: Ինքնապահպանման այդ դրույթն է, որ Պատկանյանը, բոլոր իր կարողության, արվեստի միջոցներով արժարժում է իր գեղարվեստական արձակում: Նրա ստեղծագործական մեթոդը հիմնականում ռեալիստական է, որին այս կամ այն չափով հարակցվում են ռոմանտիկական տարրերը:

Րաֆֆին ևղել է Հ. Գյուլիքեխյանի սիրած հեղինակներից մեկը: Դա երևում է նրա ժողովածուում ապագրված Րաֆֆու «Կայծերը» ծավալուն գործից: Ինչպես ճիշտ կերպով նկատում է հեղինակը, Րաֆֆին մեկն էր մեր անցյալի գրականության այն գեմքերից, որոնց շուրջը հայ հասարակական մտքի տարրեր ուղղությունները բախվել են ամենաուր կերպով: Սակայն համբավավոր վիպասանի ոչ մի գրվածք այնպիսի ծայրահեղորեն թեր ու դեմ դնահատականներ չի ստացել, ինչպես «Կայծերը»: Աբովյանի, Ռ. Պատկանյանի պես Րաֆֆին էլ իր երկերում արժարժել է հայության ազգապահպանման խնդիրը, մի խնդիր, որը հուզել է XIX դարի ողջ հայ գրականությանը, ևղել է նրա լեյտմոտիվը, քաղաքական ցայտուն կերպարանք ստանալով ազատագրական պայքարի առավել բուռն շրջաններում:

«Կայծերի» պաշարարական բովանդակությունը Հ. Գյուլիքեխյանը համարում է Արևմտյան Հայաստանում բուրժուական դեմոկրատական հասարակարգի հաղթանակի ծրագիրը, նշելով միաժամանակ այդ ծրագրի թույլ ու անկատար կողմերը: «Կայծերն» ըստ Գյուլիքեխյանի իսկական մի հանրադիտարան է: Հասարակական, տնտեսական, դպրոցական, վանական կյանքի, առգամիջյան հարաբերությունների մի շարք հարցերից բացի, Րաֆֆին այդ վեպի մեջ ընդգրկել է պատկերման, նկարագրման բազմաթիվ այլ օբյեկտներ: Հ. Գյուլիքեխյանը գտնում է, որ «Կայծերի» ամենաբնորոշ հատկություններից մեկը ռոմանտիզմի և ռեալիզմի յուրօրինակ զուգորդումն է, որը ռեալիզմի տեսակարար կշիռը բորբոքվին էլ թեթև չէ: «Կայծերում» առկա են և պրոգրեսիվ ռոմանտիզմի, և քննադատական ռեալիզմի ուժեղ տարրեր: Հ. Գյուլիքեխյանը այս հոգվածը գրել է 1946—1947 թթ.: Իհարկե, «Կայծերի» խոր վերլուծության և ճիշտ գնահատականների հետ միաժամանակ այստեղ նկատելի է ն որոշ թերություններ:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Հ. Գյուլիքեխյանի՝ կլասիկ գրականության օգտագործման հարցին նվիրված աշխատությունը, որը նա գրել է 1947 թ.: «Կլասիկ ժառանգությունը և սովետահայ գրականությունը» հոդվածում մարքսիստ գրականագետին հատուկ հոգառարությամբ նա խոսում էր մեր անցյալի հայեեր արժեքների մասին: Նա սովետահայ գրականագետների մեջ առաջիններից էր, որ հետևելով Մաքսիմ Գորկու ավանդույթին, ամենայն սրությամբ առաջ բաշեց անցյալի գրականության, նրա ավանդույթների ճիշտ օգտագործման հարցը: Նա գրել է. «Կլասիկ ժառանգության օգտագործման հարցերը սովետահայ գրականության և քննադատության մեջ փոքր ի շատե ծավալով, սխտեմատիկորեն, տեսական բարձր մակարդակի վրա չեն շոշափվել: Միայն կեցկտուր դատողություններով, մասնակի դիտողություններով են բավարարվել, երբ հարկավոր է եղել պատասխանել թե ի՞նչ

շափով, ի՞նչ սահմանների մեջ են սովետահայ գրողներն օգտագործում կլասիկ գրականությունը, թե ի՞նչ հիմունքներով, ի՞նչ ուղղությամբ, ի՞նչ որակով է տեղի ունեցել այդ օգտագործումը»։ Հ. Գյուլիքեխյանը այն միտքն է զարգացնում, որ մեր անցյալի գրական ժառանգության մեջ արտացոլվել են հայոց պատմության կենտրոնական խնդիրները, սոցիալական կյանքի հիմնական հակասությունները, մեր ժողովրդի հերոսական և դժվարին պայքարը գանալան տիպի կեղեքիչների, ճնշողների դեմ։ Նա իրավացիորեն գտնում է, որ չի կարող լինել սովետահայ որևէ գրող, որն իր ստեղծագործական աշխատանքում իրեն կապված չզգա անցյալ գրականությունից և կող առաջավոր սովանդությունների հետ և այս կամ այն շափով օգտագործած չլինի անցյալի կլասիկների գեղարվեստական նվաճումները։ Խոսելով այն մասին, թե ժամանակակից սովետահայ պոետները իրենց արվեստը զարգացնելու նպատակով ինչպես են օգտագործում կլասիկ ժառանգությունը, հոգևածաղիկը, պատմական էքսկուրս կատարելով, արժեքավոր և կոնկրետ դիտողություններ է անում, մասնավորապես, սովետահայ պոեզիայի վերաբերյալ՝ սկսած նրա սկզբնավորումից մինչև Հայրենական պատերազմի շրջանը, Չարենցից մինչև Համո Սահյանը։

Հ. Գյուլիքեխյանը համեմատաբար շատ է դադարվել դրամատուրգիայի ու թատրոնի հարցերով։ Նրա ուշադրության կենտրոնում են եղել հատկապես սովետահայ դրամատուրգիայի հարցերը։ Իր հոգևածնեցում Հ. Գյուլիքեխյանը քննադատական հետաքրքիր դիտողություններ է արել դրամատուրգիայի աչքի ընկնող գործերի վերաբերյալ։ Հենվելով մեր կուսակցության համապատասխան որոշումների վրա, քննադատը առաջադրում է այն ճշմարիտ միտքը, թե սովետահայ դրամատուրգիայի զարգացման հիմնական նախադրյալը, նախ, գրողի կողմից կյանքը ճանաչելն է, երկրորդ՝ սովետական կուլտուրայի բարձունքներին հասնելը, երրորդ՝ տեսական-գաղափարական մակարդակը բարձրացնելը։ Նա դատաւարտում է որոշ հեղինակների այն մտայնությունը, թե՛ «ես ստեղծագործող եմ, տեսությամբ չեմ դադարում, ինչո՞ւ ես պետք է խորանամ սոցիալիստական ռեալիզմի խնդիրների մեջ, թող դրանով դադարվեն տեսաբանները, գրականագետները»։ Դատաւարտելով մտքի ծուլությամբ տառապողներին, նա ասել է. «Այսպես է մտածում իր իսկ հիմնական դեմքի ընդլայնման անտարբեր գրող-դրամատուրգը, իր մտքի ծուլությունը քողարկել ջանկատողը։ Հարկավոր է դեռ նետել այն շաղակրատանքը, — դրել է նա, — ըստ որի, օրինակ, Սոֆոկլեսը, Շեքսպիրը տեղյակ չեն եղել իրենց ստեղծագործության մեթոդին, դրամատուրգիայի տեսական խնդիրներով չեն պարապել, բայց հասնաբեղ գործեր են արտադրել... ոչ մի Սոֆոկլես և Շեքսպիր լուսնահարային վիճակում չի ստեղծագործել», — եզրակացնում է հեղինակը։

«Սովետահայ դրամատուրգիան 25 տարում» աշխատության մեջ Հ. Գյուլիքեխյանը տեսական փիլիսոփայական խոր վերլուծության է ենթարկել քառորդ դարի ուղի անցած մեր դրամատուրգիան, որի դրականն ու բացասականը բացահայտելիս նա ղեկավարվում է պատմականության սկզբունքներով։ Աշխատության մեջ շոշափվում են դրամատուրգիայի համար վճռական նշանակություն ունեցող այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ թեմատիկալ, սյուժեն, կոմպոզիցիան, ստեղծագործական մեթոդը, ոճը և այլն։ Նա մեր դրամատուրգիայի հրամայական խնդիրն է համարում սողացող էմպիրիզմի ու սխեմատիզմի հաղթահարումը։ Հակառեալիստական այդ շեղումների հիմքը դրա-

կանազեւո-քննադատը տեսնում է այն բանում, որ դրամատուրգը իրականութիւնը նեղ, սահմանափակ տեսանկյունից է դիտում, երևութիւնների տակ թաքնուած էութիւնը բացահայտելու կարողութիւնից զուրկ է: Դրամատուրգիայի բնագավառում սխեմատիզմի և էմպիրիզմի մնացուկների վերացման վերաբերյալ Գյուլիքեխյանի առաջ քաշած իրավացի պահանջը այսօր էլ պահանջում է իր ուժը: Այժմեական էն հնչում մարքսիստ քննադատի նաև այն պահանջները, որ նա դնում է դրամատուրգների առջև գործող անձերի լեզվի տիպականացման և լեզվական կուլտուրայի բարձրացման ուղղութիւնով:

Սովետահայ շեքսպիրադիտութիւնը չի կարող ուրանալ այն գրականագետների երախտիքը, որոնք առաջինը համարձակ քայլեր են արել այդ ուղղութիւնով: Դրանց շարքում է նախ Հ. Գյուլիքեխյանը, որի «Շեքսպիրը նախասովետական հայ քննադատութեան մէջ» և «Աղամյանի Շեքսպիրը» տառամասերութիւնները նշանակալի երևույթ էին մեզանում: Առաջին հոգւածում Հ. Գյուլիքեխյանը տալիս է Շեքսպիրի գործերի հայ իրականութեան մէջ մուտք գործելու համառոտակի պատմութիւնը և միաժամանակ նշում դրանց զգալի ազդեցութիւնը հայ գեղարվեստական մտքի վրա: Նա գրում է, որ անգլիական հանճարեղ դրամատուրգին ծանոթանալու իր առաջին քայլերը հայ հասարակութիւնն արեց անցյալ դարի 30-ական թթ.: Սակայն այդ քայլերը դեռևս պատահական էին: Մեր քննադատութիւնը Շեքսպիրով ավելի հիմնավոր կերպով զբաղվեց 1850-ական թթ., երբ սկսվեց հին արժեքների վերագնահատումը և դրվեցին հայ նոր թատրոնի առաջին հիմնաքարերը: Շեքսպիրի գործերի առաջին հաջողութիւնները հայ իրականութեան մէջ պատմականորեն պայմանավորված էին ոչ միայն դրանց ներգործման մեծ ուժով: Այդ հաջողութեանը քիչ չնպաստեց նաև հանճարեղ ողբերգակ Պետրոս Աղամյանը՝ հանդես գալով Համլետի, Օթելլոյի և Լիրի դերերում: Հ. Գյուլիքեխյանը իրավացի կերպով նշում է, որ նախասովետական հայ թատերական գործիչներից ոչ մէկը այնպիսի մեծ չափերով չի նպաստել Շեքսպիրի ողբերգութիւնների ժողովրդականացմանը հայ իրականութեան մէջ, որքան Պետրոս Աղամյանը, որը ժամանակին իրավամբ դասվել է Համլետի բեմական կերպարներ՝ հանդես գալով Համլետի, Օթելլոյի և Լիրի դերերում: Հ. Գյուլիքեխյանը մանրամասն լուսաբանում է Աղամյանի դերը Շեքսպիրի ստեղծագործութիւնների գնահատման և նրա կերպարների բեմականացման գործում: Նա գրել է. «Աղամյանն առաջինն է հայ քննադատութեան մէջ, որ ծավալուն փորձ կատարեց ցույց տալու: Համլետին նրա ամբողջ վիթխարի հասակով, բացահայտելու հուշակալոր տրագիկի գաղափարական խոր բովանդակութիւնը, վեր հանելու նրա գեղարվեստական անանց արժեքը»: Գյուլիքեխյանի «Շեքսպիրը և իր Համլետ ողբերգութեան աղբյուրներն ու քննադատութիւնները» գրքուկը իր տեսակի մէջ սովետահայ շեքսպիրադիտութեան ներածութիւնն էր:

Հ. Գյուլիքեխյանը ռուսական կուլտուրայի և արվեստի բարձր գնահատողներից էր մեր իրականութեան մէջ: Վերջերս հրապարակվեց նրա շատ արժեքավոր անտիպ գործերից մեկը՝ «Պուշկինի գեղագիտական հայացքները դրամատուրգիայի վերաբերյալ», որը մեծ գրողի ծննդյան 150-ամյակի առթիվ նրա կարգացած հրապարակային գեղուղման սղագրութիւնն է: Այս գործը Հ. Գյուլիքեխյանի գրականագիտական ուսումնասիրութիւնների պար-

դերից մեկն է թե՛ իր տեսական խորությամբ, թե՛ պրոբլեմի սպեցիֆիկան ճիշտ ըմբռնելու և լուսաբանելու տեսակետից:

Խոսելով ռուսական գեղագիտության և քննադատության մեջ Պուշկինի կատարած դերի մասին, հեղինակը իրավացի կերպով նշում է, որ նա առաջինը ձևակերպեց մի շարք հիմնական դրույթներ, որոնք հետագայում զարգացրեց հանճարեղ Բելինսկին:

«Պուշկինի գեղագիտական հայացքները դրամատուրգիայի վերաբերյալ» հոդվածում Հ. Գյուլիքեխյանը ցույց է տալիս, որ Պուշկինը ամենից շատ ղեկավարել է պատմական ողբերգության գեղագիտությամբ, քանի որ նրա ժամանակ դրամատուրգիայի այդ ժանրը տիրապետող էր և համարվում էր առավել զօրավարին: Խորամուխ լինելով պրոբլեմի մանրամասներին, հեղինակը ցույց է տալիս, թե Պուշկինը ինչ է պահանջում դրամատուրգիայից, ինչպիսի սկզբունքներով պետք է ղեկավարվի դրամատուրգը, որոնք պետք է լինեն նրա գեղարվեստական մեթոդի նախադրյալները:

Վերլուծելով Պուշկինի գրականագիտական մտքերը, Հ. Գյուլիքեխյանը ընդգծում է, որ XIX դարի սկզբի այդ մեծ նորարարը առաջինը պայքար օկսեց կլասիցիզմի օտարամուտ տրագիցիաների դեմ, հանուն ռուսական արվեստի ռեալիստական սկզբունքների: Պուշկինը դրույթների ճշմարտությունը և դիալոգի հակասականությունը համարում էր տրագիկայի իսկական օրենքը: Նա գտնում էր, որ կլասիցիզմի և Լերմոնովի միասնության օրենքը կաշկանդում է գեղագիտական մտքի և երևակայության ազատ ու անկաշկանդ թռիչքը: «Բորիս Գոգոլնով» պատմական ողբերգությունը գրված է հենց նրա որդեգրած պատմական ռեալիզմի այդ մեթոդով: Եթե կլասիցիզմը բացառում էր պատմական դեպքերի ու դեմքերի ռեալ պատկերումը, ապա Պուշկինը իր ողբերգության մեջ ձգտում էր պատմական իրադրությունը, հոգեբանական կոնֆլիկտը և կրքերի բախումը տալ ոչ թե փակ շրջանակի մեջ, այլ պատմական կյանքի լայն ֆոնի վրա:

Հ. Գյուլիքեխյանը հաստատում է այն կարևոր միտքը, որ Պուշկինի պայքարը կլասիցիզմի դեմ լայն ճանապարհ հարթեց ռուսական նոր գրականության համար, որով էլ նա ընթացավ դեպի ժողովրդայնությունը և ռեալիզմը:

Համեմատության մեջ դնելով Պուշկինի դրամատուրգիական սկզբունքները եվրոպական կլասիկների՝ Մոլիերի, Բայրոնի, Շեքսպիրի հետ, հեղինակը նախ ցույց է տալիս, որ խառակաւորների ստեղծման ասպարեզում Պուշկինը զգաց Մոլիերի ու Բայրոնի սահմանափակությունը և Շեքսպիրի առավելությունները: Երկրորդ, Պուշկինն ընդունեց Շեքսպիրի մեծ դերը ռեալիստական դրամատուրգիայի պատմության մեջ և զնաց նրա ուղիով: Երրորդ, Շեքսպիրն այնքան ամուր չէր կապված ժողովրդի հետ, ժողովրդի ճակատագիրը նրան այնպես չէր հուզում, ինչպես Պուշկինին:

Այդ մասին է վկայում Պուշկինի «Բորիս Գոգոլնով» ողբերգությունը, որի մեջ զլխավոր դործող անձը ժողովուրդն է: Կամ թե «Դրամատիկական արվեստը ծնվեց հրապարակում» հոդվածը: Եվ վերջապես, իր դավանած գրական սկզբունքների համաձայն միայն Պուշկինը կարող էր Ստեփան Ռադինին համարել ամենարանաստեղծական ֆիգուրան Ռուսաստանի պատմության մեջ:

Անվիճելի է Հ. Գյուլիքեխյանի այս հոդվածի տեսական-իմացական նշանակությունը, որտեղ ցայտուն կերպով երևան են եկել եվրոպական և ռուսա-

կան գրականության լավ իմացությունը, նրա բարձր կուլտուրան, գրականագիտական լայն էությունը, հարցերը փիլիսոփայական խորությամբ ամբողջությամբ և պարզաբանելու կարողությունը:

Հ. Գյուլիքեխյանը գրական ասպարեզ էր մտել մաքուր խղճով և ազնիվ սրտով: Նա գրական յուրաքանչյուր երևույթի մասին խոսել է անկեղծորեն, առանց բիվանագիտության, կանգնած լինելով սկզբունքայնության դիրքերի վրա: Արվեստի և գրականության հարցերի նրա գնահատականների շիտակությունը և ուղղամտությունը բխում էին նրա խոր պաշտպարանությունից:

Անուրանալի է Հայկ Գյուլիքեխյանի վաստակը սովետական մշակույթի բնագավառում: Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին օրերից նա դարձավ այդ մշակույթի բոլորանվեր գործիչներից մեկը, աճեցրեց տեսական ու գրական շատ կադրեր, բանավոր ու գրավոր խոսքով պրոպագանդեց մարքսիստական փիլիսոփայությունն ու գրականագիտությունը:

ПРОФЕССОР ГАЙК ГЮЛИКЕВХЯН

(К 90-летию со дня рождения)

В. В. КАЗАНЧЯН

(Резюме)

Выдающийся ученый, профессор Гайк Габриэлович Гюликевхян был первым представителем марксистской философии в Армении. Он родился 6-го января 1886 года в г. Шуше. Среднее образование получил в родном городе, там же примкнул к социал-демократическому движению. В 1914 году он окончил философский факультет Гейдельбергского университета. Г. Гюликевхян в период своего пребывания в Германии принимал активное участие в социал-демократическом движении, находился в контакте с Карлом Либкнехтом и Розой Люксембург. В связи с началом первой мировой войны он, как русскоподданный и политически неблагонадежный человек, был арестован германскими властями.

После установления Советской власти в Армении в 1920 году Гюликевхян по решению Кавказского бюро ЦК РКП из Москвы отправляется в Ереван и занимает впоследствии должности проректора и зав. кафедрой марксистской философии Ереванского государственного университета.

Велика роль профессора Гюликевхяна в идеологической жизни республики, в деле подготовки научных кадров, в частности литературоведов. Он был не только признанным главой философской мысли в Армении в 1920—40-х годах, но и одним из зачинателей в республике марксистско-ленинского литературоведения и литературной критики. Его работы, посвященные творчеству Пушкина, Горького, Абовяна, Сундукяна, Раффи, Патканяна и других, до сих пор не утратили своей научной ценности. Профессор Гайк Гюликевхян долгие годы работал в Педагогическом институте русского и иностранных языков, где читал лекции по русской и западноевропейской литературе и по литературоведению.